ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «ՀՊՏՀ շրջանավարտ 2013թ» միջոցառման ժամանակ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի հարգարժան նախագահ, խորհրդի հարգելի անդամներ,գործընկերներ, հյուրեր,սիրելի շրջանավարտներ

Հպարտության և պատասխանատվության բարձր զգացումով ենք այսօր համակված, քանի որ մեր համալսարանը տալիս է իր հերթական թողարկումը՝ կյանք ճանապարհելով շրջանավարտների ևս մեկ հերթափոխ: Ուրախ ենք նաև, որ այս տարի շրջանավարտների ավարտական հանդիսությունը հնարավորություն ունենք անցկացնելու մեր համալսարանի նորակառույց բակում:

Սիրելի շրջանավարտներ, ձեր սերունդն ականատեսն է եղել մեր համալսարանում «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո վերջին տարիներին արված բարեփոխումներին, որոնք եղել են տարբեր ուղղություններով և որոնց նպատակն է եղել կրթության որակի բարձրացումը, ուսումնառության հաճելի և հարմարավետ միջավայրի ստեղծումը: Համալսարանի ղեկավարությունը ոչ մի ջանք, ոչ մի հնարավոր քայլ բաց չի թողել՝ ձեր ուսումնառության տարիները հիշարժան դարձնելու համար, թեև միգուցե եղել են նաև բացթողումներ, որոնք կշտկվեն ապագայում:

Ես ցանկանում եմ, որպեսզի դուք այսօր՝ ավարտական վկայականները ստանալիս, լինեք այն բարձր գիտակցության կրողը, որ ավարտում եք հայաստանյան տնտեսագետ կադրեր պատրաստող ամենահեղինակավոր կրթական հաստատությունը:

Տնտեսագիտական մայր համալսարանի կոչումն ու առաքելությունը բազմիցս բանաձևումներ է ստացել, սակայն բոլոր ձևակերպումների

հիմքում գիտելիքն է, փորձն ու հմտությունը, առաջադեմ մտածողությունը և, իհարկե, «լավ մարդ» հատկանիշը: Բոլորիս քաջ հայտնի է, որ մեր շրջանավարտներն այսօր հաղթական գործունեություն են ծավալում հանրապետության ղեկավարման տարբեր ատյաններում, տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում: Ցանկալի է, որ աշխատանքային առաջընթացն ուղեկցի նաև մեր այսօրվա շրջանավարտներին, որ նրանք կարողանան գտնել իրենց արժանի տեղը, իրականացնեն իրենց ծրագրերը:

Համալսարանը նախանձախնդիր է իր յուրաքանչյուր շրջանավարտի մասնագիտական կայացման համար, հետամուտ է կամրջելու մասնագիտացումը աշխատանքային փորձառության ու աշխատանքի տեղավորման հետ. դրա վառ ապացույցն է քննական եռուզեռին զուգընթաց՝ համալսարանում աշխատանքի տոնավաճառի կազմակերպումն ու անցկացումը: Տնտեսագիտական մայր բուհը, օրեցօր առաջադրվող նորանոր պահանջներին համընթաց, մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների բազմազանություն է առաջարկում՝ ապահովելով կրթական բարձրորակ ծառայություններ: Թե՛ բակալավրական, թե՛ մագիստրոսական կրթությամբ ՀՊՏՀ-ն այս տարի թողարկում է հարուստ գիտելիքներով զինված մասնագետներ՝ տնտեսագետներ, ֆինանսիստներ, հաշվապահներ, վիճակագիրներ և բազմաթիվ այլ մասնագետներ:

Սիրելի շրջանավարտներ, ձեր առջև մեծ հորիզոններ են բացվում՝ որոնումների, ինքնահաստատման, կայացման: Որտեղ էլ որ հայտնվեք, ինչ միջավայրում էլ աշխատեք, եղեք վճռական ու հաստատակամ, շարունակեք սովորել: Հորդորում եմ ձեզ բուհն ավարտելուց հետո չխզել կապը հարազատ կրթօջախի հետ՝ վստահ լինելով, որ հարազատ բուհը ձեր թիկունքին է ու պատրաստ է աջակցելու: Բարին ձեզ հետ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ